ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ս. թ. նոյեմբերի 7-ին, Հոկտեմբերյան ռևոլուցիայի 29-րդ տարեդարձի օրը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ, ս. պատարագ մատուցվեց։ Պատարագից հետո կատարվեց Հանրապետական հանդիսավոր մաղթանք՝ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մասնակցությամբ։

Քարոզ խոսեց Գերաշնորհ Տ. Ներսես եպիսկոպոս Աբրահամյանը։

***

Ս. թ. նոյեմբերի 29-ին, Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելու 26-րդ տարեդարձի օրը, Ս. Էջմիածնի Մայր Տաճարում ս. պատարագ մատուցվեց, որից հետո տեղի ունեցավ Հանրապետական մաղթանք։ Պատարագին ներկա էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։

***

Ս. թ. նոյեմբերի 29-ին, Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու 26-րդ տարեդարձի օրը, հավատացյալների խուռն բազմության ներկայությամբ, Թբիլիսիի Ս. Գևորգ եկեղեցում ս. պատարագ մատուցվեց։

Պատարագում էր Մայր Աթոռից գործուղված Տ. Եղիշե վարդապետ Հարությունյանը։

Պատարագից հետո հանդիսավոր մաղթանք կատարվեց։

Քարոզ խոսեց Տ. Եղիշե վարդապետ Հարությունյանը։

ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՓԱՐԻԶԻ ՄԵՋ

Գերաշն. Տ. Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյան Պեյրութեն Փարիզ հասեր է օդոստոսի 22-ին, որպես Հայրապետական լիազոր ներկայացուցիչ՝ վերակազմելու համար Եվրոպայի թեմը, և պատգամավորական ժողովի մը միջոցավ ընտրել տալու թեմական առաջնորդը։

Արտավազդ Սրբազան Փարիզ ժամանելե անմիջապես վերջ Հայոց եկեղեցին երթալով քարոզ մը խոսեր է և հետո խորհրդարանին մեջ ընդումներ է գաղութին շնորհավորությունները։

Այս առթիվ կարժե հիշել թե Արտավազդ Սրբազան ավելի քան քսան տարի Հալեպի և Պեյրութի մեջ ամենայն հավատարմությամբ և ուղղամտությամբ ծառայեց Հայաստանյայց Եկեղեցվո և հայ հոծ համայնքին։ Իր ջանքերուն շնորհիվ հիմնվեցան կարգ մը եկեղեցիներ, դպրոցներ, բարեսիրական հաստատություններ, և ազգն ու եկեղեցին բարվոք հարաբերությանց մեջ դրվեցան տեղացի և հովանավոր պետությանց, հոգևոր պետերու և օտար շրջանակներու հետ։

Սյուրմեյան արքեպիսկոպոսի անցյալ արդյունավետ գործունեությունը ինքնին երաշխիք է թե անիկա պիտի կրնա իրագործել բովանդակ Եվրոպայի թեմը միակ Առաջնորդության մը կապելու Հայրապետական իղձն ու փափաքը։

(«Հայաստանի կոչնակ» թիվ 40, 1946 թ.)

ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ԱՌԺԱՄՅԱ ԿՈՄԻՏԵԻ ՁԵԿՈՒՅՑԸ

Պուլկարահայ Փոքրամասնության Առժամյա Կոմիտես պուլկարահայության կհայտարարե, թե Պուլկար Նախարարական Խորհրդի 26 սեպտեմբեր 1946 թվի որոշմամբ տրված

արտոնության համաձայն, 30 սեպտեմբեր 1946-ին Վառնայեն մեկնող սովետական «Վյաչեսլավ Մոլոտով» շոգենավով Սովետական Հայաստան ղրկված են Ռոտոսթո և Էտիրնե քաղաքներեն 1922-ի գաղթի շրջանին Պուլկարիա բերված եկեղեցական գույքեր և անոթներ, մասնավոր ցուցակագրությամբ ստացված մասնավոր Հանձնախումբի մը կողմե։

Նույն շոգենավով ուղարկված են նաև Ռուսեի եկեղեցիին կողմե նվիրված երեք կտոր ձեռագիր հին Ավետարաններ, ինչպես նաև Զեյթունի 1895-ի ապստամբութենեն դրվագ մը ներկայացնող յուղանկար մը, գնված և նվիրված հանգուցյալ Մուրատ Մեսրեմեանցի կողմե Բլովդիվաբնակ Պ. Արիս Կուրպեթյանի ձեռամբ։

Պուլկարահայ Փոքրամասնության Առժամյա Կոմիտեի

Նախագահ՝ Գ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ատենադպիր՝ Մ. ԽԱՉԻԿՅԱՆ

Սոֆիա
(«Եփրատ», թիվ 2767, 1946 թ.)

Սաեոր.—Նշված գույքերը ստացվել են Էջմիածնում։
ԽՄԲԱԳՐ.

ԵՓՐԵՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏՈՀՄՈՒՆԻԻ ՄԱՀԸ

† Եփրեմ Արքեպիսկոպոս Տոհմունի

Ս. թ. նոյեմբերի 27-ին Դամասկոսում ի Տեր հանգյավ Դամասկոսի Կաթողիկոսական Փոխանորդ Տ. Եփրեմ Սրբազան Տոհմունին։

Հանգուցյալ Տ. Եփրեմ Արքեպիսկոպոս Տոհմունին ծնվել է 1880 թվին Սսում։ Նախնական կրթությունն ստացել է Սսի Ազգային Վարժարանում և ապա Ժառանգավորաց Վարժարանում։

1909 թվին Սսի Մայրավանքում վարդապետ է ձեռնադրվել։ 1930 թվին ձեռնադրվել է եպիսկոպոս, իսկ 1937 թվին ստացել արքեպիսկոպոսության աստիճան։

Տ. Եփրեմ Սրբազանը երկար տարիներ ուսուցիչ է եղել Սսի Ազգային և Ժառանգավորաց վարժարաններում։

Տարագրության տարիներին անցել է Երուսաղեմ, ուր իր ուժերը նվիրել է գաղթականության գործին։ Պատերազմից հետո վերադարձել է Ադանա։ Կիլիկիո հայության դաղթից հետո հովվական պաշտոն է վարել Հունաստանում 1920—1923 թ. թ.։ 1923—1924 թ. թ. հանդիսացել է Կաթողիկոսական Փոխանորդ Լիբանանի թեմի, ուր մի շարք ազգային վարժարաններ է հիմնել։ 1924—1925 թ. թ. նշանակվել է Հալեպի թեմի Առաջնորդական Տեղապահ։ 1925—1933 թ. թ. Լաթաքիո թեմի Կաթողիկոսական Փոխանորդն էր, իսկ 1933—1946 թ. թ., մինչև իր մահը, Դամասկոսի թեմի Կաթողիկոսական Փոխանորդը։

1945 թվին Եփրեմ Արքեպիսկոպոս Տոհմունին ժամանեց Ս. Էջմիածին և մասնակցեց Ազգային-Եկեղեցական ժողովի աշխատանքներին։ Այստեղ ազնիվ ու անկեղծ հայրենասեր Եփրեմ Սրբազանը հնարավորություն ունեցավ Հայրենիքի տնտեսական ու կուլտուրական բուռն վերելքին մոտիկից ծանոթանալու և իրեն անչափ երջանիկ զգալու հայ ժողովրդի նոր Ոսկեդարի գոյության համար։

Հայ եկեղեցին, Տ. Եփրեմ Արքեպիսկոպոս Տոհմունու մահվամբ, կորցրեց Հայ Եկեղեցուն ու Հայ ժողովրդին նվիրված անձնազոհ ու հայրենասեր մի հովվի։

Հանգիստ իր հոգվույն։